

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԵՅԼԵՐՅԱՆ ՀՈԿՐԱՆՆԵՍ ՀՐԱԶՅԱՅԻ

ՄԵԾ ՊԱՅՔԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԸՆԹԵՐՑՎՈՂ ԱՌԱԿՆԵՐԻ  
ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ժ. 01.01. - «Հայ դասական գրականություն»  
մասնագիտությունը ամբիջանասիրական գիտությունների  
թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսություն

**ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ- 2017

Ատենախոսություն թեման հաստատվել է ՀՀ Գիտություն և ներքին  
Ազգային Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության  
ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ Բանասիրական գիտություն և ներքին  
դոկտոր, պրոֆեսոր

**Ալբերտ Արշավիրի Մակարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բանասիրական  
գիտություն և ներքին դոկտոր, պրոֆեսոր

**Արծրունի Սամվելի Սահակյան**

Բանասիրական գիտություն և ներքին թեկնածու

**Արքմենիկ Հրայրի Նիկողոսյան**

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական  
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017թ. դեկտեմբերի 8-ին,  
Ժամը՝ 12.30-ին ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության  
ինստիտուտում գործող ԲՈՅ-ի Գրականագիտության 003  
մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությունը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ.  
Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:  
Սեղմագիրն առաքված է 2017թ. նոյեմբերի 8-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
Բանասիրական գիտություն և ներքին թեկնածու  
**Մարգարյան**

**Ս.Ա.**

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒ Բ ԲՆՈՒ ԹԱԳԻՐԸ**

Գրական ուրույն ստեղծագործություններ են ավետարանական առակները, որոնք իրենց գեղարվեստական յուրահատկություներով, խորհրդաբանական իմաստով, այլաբանական խորքով և եկեղեցական արարողություններում ունեցած ծիսաարարողական նշանակությամբ միանգամայն տարբերվում են անտիկ աշխարհի և հին արևելյան առակներից:

Ավետարանական առակների շարքում իրենց հերթին առանձնանում են Մեծի Պահոց շրջանի յոթ շաբաթներին եկեղեցական ժամերգությունների ընթացքում ընթերցվող առակները:

Աշխատանքում ցույց է տրվում, որ հիշյալ առակները, մասկազմելով Մեծ Պահքի ընթերցումների, բուն ավետարանական մեկնությունների կողքին բացատրվել են նաև Պահոց շրջանի շաբաթների պարունակած հոգևոր խորհրդի շրջանակում: Ատենախոսության մեջ ներկայացվող առակների մեկնությունները արտացոլվել են նաև գրական տարբեր ժանրերում՝ գանձերում, շարականներում, ճառերում և քարոզներում, Շնորհալու «Յիսուս Որդի» պեմում:

Այս հանգամանքը բացատրվում է հիշյալ առակների տոնախոսական բնույթով: Քանի որ յուրաքանչյուր տոն ունի իր շարականը, գանձը և եկեղեցական կանոնի մյուս միավորները, ուստի Մեծ Պահքի շրջանի Անառակի, Տնտեսի և Դատավորի կիրակիներին և Ավագ Շաբաթվա օրերին վերաբերող եկեղեցական կանոնների շրջանակում պետք է ստեղծվեին հիշյալ առակներին նվիրված և եկեղեցում կատարվող համապատասխան ստեղծագործություններ, որոնց վերլուծությամբ և նվիրված սույն ատենախոսությունը:

**ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒ ԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒ ԹՅՈՒՆԸ**

Թեմայի արդիականությունը պայմանավորված է ավետարանական առակների բազմաշերտ վերլուծությամբ, որը վերաբերում է թե՛ մեկնաբանական գրականությանը, թե՛ միջնադարյան գրականության ժանրերին ու եկեղեցական ծեսին:

Աշխատանքը հավասարապես հարաբերվում է հիշյալ երեք բնագավառների հետ: Միջնադարյան մատենագրության գրականագիտական վերլուծության շրջանակում անդրադարձ է կատարվում եկեղեցու կողմից արժարժվող հոգևոր քարոզչական և դաստիարակչական-խրատական հարցերին, ծիսագիտությանը, գեղարվեստական արտահայտչամիջոցների հոգևոր ներազդեցությանը կատարվող ծիսական արարողությունների ժամանակ:

Այս խնդիրներն այսօր քննարկվում են տարբեր գիտակարգերին վերաբերող ուսումնասիրություններում:

**ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒ ԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Աշխատանքի նպատակն է Մեծ Պահքի շրջանում ընթերցվող առակները վերլուծել ոչ թե ավետարանական մեկնությունների շրջանակում, այլ այդ համատեքստից

դուրս, գրեթե ինքնուրույն կենցաղավարմամբ՝ եկեղեցական ծեսի շրջանակում:

Առակների այլաբանական բնույթը արտահայտվում է գեղարվեստական պատկերավորմամբ, որը գրականագիտական վերլուծության լայն հնարավորություն է ընձեռում, և այս տեսանկյունից քննվում են հիշյալ ստեղծագործությունները:

Ատենախոսության նպատակն է ոչ թե սոսկ վերլուծել Մեծ Պահքի ընթացքում եկեղեցական ժամերգությունում ընթերցվող առակները, այլ դրանք դիտարկել եկեղեցական արարողությունների համատեքստում: Նման մոտեցումն իր հերթին պայմանավորել է աշխատանքի կառուցվածքը և խնդիրները՝ ըստ տոնախոսական ընթացքի համապատասխան խմբավորմամբ վերլուծել Մեծ Պահքի կիրակիների, Ավագ Շաբաթվա ընթացքում ընթերցվող և Քառասորյա պահքի շրջանի մյուս առակները:

### **ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԿԿՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ**

Ատենախոսության մշակվածության աստիճանը պայմանավորված է հայ եկեղեցական և ընդհանուր քրիստոնեական մեկնաբանական գրականության մեջ ավետարանական առակների շարունակաբար կատարված մեկնություններով: Միջնադարում վեր էին հանվում ավետարանական առակների այլաբանական իմաստները, և այս առակները վերլուծվում էին չորս ավետարաններից յուրաքանչյուրի համատեքստում, Նոր շրջանի եկեղեցագիտական և գրականագիտական ուսումնասիրություններում դրանք արդեն վերլուծվում են ամենատարբեր հարցերի շրջանակում:

Վերլուծությունները վերաբերում են ոչ թե անմիջաբար այդ առակներին, այլ դրանց մեկնությունները կատարած հեղինակներին: Այսպես, Ներսես Ընորհալու «Յիսուս Որդի» պոեմի կամ Գրիգոր Տաթևացու «Քարոզգրքի» երկու հատորների վերլուծության շրջանակում քննվում են նաև այդ առակները:

Պայմանավորված այս հանգամանքով՝ քննվող նյութը բավականին ցրիվ և ծավալուն է թե՛ ժամանակային առումով՝ վաղ շրջանի քրիստոնեական մեկնություններից մինչև այժմյան գրականագիտական և եկեղեցագիտական ուսումնասիրություններ, և թե՛ տարածական՝ տարբեր հեղինակների ստեղծագործությունների վերլուծության շրջանակում անդրադարձ նաև առակների նրանց կատարած մեկնություններին:

Աշխատանքի նորույթը կայանում է նրանում, որ ոչ թե ներկայացվում են միայն առակների պարունակած այլաբանությունները, այլ մեկնաբանական գրականությունը դիտարկվում է իր պատմական զարգացման մեջ, թե յուրաքանչյուր դարաշրջան մեկնաբանական ինչ մոտիվ է ավելացրել, և վերջինս գեղարվեստական ինչ արտահայտչամիջոցներով է դրսևորվել:

**ՈՒՍՈՒՄ ԱՄԱՏԻՐՈՒ ԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒ ԹՅՈՒՆ Ը**

Առեւ նախտ սու թյ ու նը գրված է բնագրայ ին համեմատութ յան մեթոդով: Դիտարկվում է առակի այլ արբանութ յան գարգացման ընթացքը ըստ աստվածաբանական մտքի զարգացման և պատմական տարբեր դարաշրջանների՝ ելակետ ու նենսալով հարցադրումը, թե հասարակական աշխարհայացքի և գեղարվեստական մտածողութ յան փոփոխութ յու նները ինչպես են արտահայտվել գրական տարբեր ժանրերում:

Մեթոդաբանական ելակետ է ընդունվել տոն-առակ հարաբերակցութ յան արտացոլումը գրական վերլուծութ յան ժամանակ: Հակառակ դեպքում, եթե անտեսվեր տոնախոսական կողմը, ասպա աշխատանքի գլխաբաժանումը կհիմնվեր տոնախոսական թեմատիկ բազմազանութ յան, կառուցվածքակաղապարային բաժանման, այլ արբանական ու խրատաբանական բացատրութ յու նների վրա:

Այնինչ հիմք է ընդունվել նրանց եկեղեցական ծիսական գործառութ յը: Այս պատճառով գլուխների ու ենթագլուխների բաժանումը իրականացվում է Տոնացույցային ընթացքով՝ Անառակի կիրակիից մինչև Ավագ Շաբաթ ընթերցվող առակների հաջորդական ներկայացմամբ:

Որպես վերլուծութ յան մեթոդաբանական երկրորդ հիմք ընդունվել է այն դրութ յը, որ հիշյալ առակների միջնադարյան մեկնութ յու նները պայմանավորված չեն միայն մեկնաբանական գրականութ յամբ, այլ և բացատրվում են Հայոց եկեղեցու Տոնացույցի և ժամկարգութ յան գարգացման ընթացքով և եկեղեցական ծեսում այդ առակների գրված տեղով:

**ԱՏԵՆԱԽՈՒԹ ԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆԵԱՆԱԿՈՒ ԹՅՈՒՆ Ը**

Ներկայացվող աշխատանքը կարող է օգտակար լինել գրական և ժողովրդական առակների հարաբերակցութ յան ուսումնասիրման, այլ արբանական մտածողութ յան գեղարվեստական դրսևորումների, եկեղեցական քարոզխոսութ յան՝ միջնադարյան գրական տարբեր ժանրերում դրսևորվելու, այլ արբանական խոսքի հոգևոր-բարոյական ներագդման և, ըստ այսմ, այսօրվա գրականութ յան մեջ նորովի կիրառութ յան առումով:

Աշխատանքը, ու նենսալով որոշակիորեն միջգիտակարգային ուղղվածութ յու ն, կարևորվում է նաև եկեղեցագիտական առումով, քանի որ քննվում են Մեծ Դահլիճի շաբաթների հետ կապված երկու՝ իրար փոխլրացնող հարցեր: Վերլուծութ յան նման եղանակը ցույց է տալիս, թե եկեղեցագիտութ յու նը ինչ հարակից նյութ կարող է տրամադրել գրականագիտութ յանը և հակառակը:

Առաջին՝ Բարեկենդանից մինչև Ս. Հարութ յու ն ձգվող շաբաթների հոգևոր խորհրդի ընթացքը ինչպես է արտահայտվել ավետարանական առակների անվանումներով, և երկրորդ՝ այդ շաբաթների խորհրդաբանութ յու նն իր հերթին լրացուցիչ ինչ

իմաստային հավելումներն է հաղորդել ավետարանական առակների մեկնության նկերին:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՅՐԱՊԱՐԱԿՈՒՄԵՆԸ**

Ատենախոսությանը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ հին գրականության բաժնի կողմից: Ատենախոսության բոլոր գլուխներն ընդգրկող վեց գիտական հոդվածներ են տպագրվել ԲՈՅ-ի կողմից ընդունվող ամսագրերում և պարբերականներում:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿՍՈՒՄՑՎԱԾԸ**

Ատենախոսությանը բաղկացած է ներածության և չորս գլուխներից, եզրակացության և գրականության ցանկից:

**ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ**

Ներածության մեջ ներկայացվում են հարցի պատմությունը, ատենախոսության նպատակը և խնդիրները, թեմայի մշակվածությանը, արդիականությանը և գիտական նորույթը:

**ԳԼՈՒԽԱՌԱՋԻՆ**

**ՀԱՅՐԱՔԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ԱՉԴԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՍԵՎՆԱՔԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԱ**

**ա Վաղ շրջանի ընդհանուր քրիստոնեական ավանդույթի ազդեցությանը ավետարանական առակների հայ կական մեկնության նկերի վրա**

Հայ մեկնողական գրականության ձևավորումը և զարգացումը անհնար է պատկերացնել առանց հայրաբանական գրականության, որից կատարված թարգմանության նկերը հիմք էին ծառայում ազգային մեկնաբանական դպրոցի ձևավորման համար: Առաջին թարգմանության նկերին գուճահեռ ձևավորվում էր հայ կական մեկնողական եզրաբանությանը:

Հայ մեկնաբանական գրականության և հատկապես բարոյաբանական բնույթի մեկնության նկերի վրա շեշտված ազդեցության են ունեցել Հոմերոսի Ռսկեբերանի գործերը:

Ինչպես նշվում է սույն ատենախոսության մեջ, Ռսկեբերանի ազդեցությանը նկատելի է նաև առակների և հատկապես «Անառակ որդու» առակին նվիրված հայ հեղինակների ստեղծագործության նկերում:

Ցույց է տրվում մեկնաբանական երկու դպրոցների՝ Անտիոքի տառացի (բառացի) կամ բարոյաբանական դպրոցի, որի մեծագույն ներկայացուցիչն էր Ռսկեբերանը, և Ալեքսանդրիայի, որի առանցքային ներկայացուցիչն էր Փիլոն Ալեքսանդրիայի, այլաբանական երկու մոտեցումների միահյուսված ազդեցությանը առակների հայ կական մեկնության նկերում: Այս հանգամանքը պայմանավորված էր նաև առակի ժանրով: Այն միաժամանակ պարունակում էր այլաբանական իմաստ և ուներ բարոյախոսական ուղղվածություն:

Հետևաբար մեկնաբանական այս կամ այն եղանակին հետևելը այլ մանավորված էր ոչ միայն այն հանգամանքով, թե տվյալ հեղինակը, մեկնիչը որ դարոցին էր հարուժմ, այլ և նրանով, թե Աստվածաշնչի որ գրքի մեկնությունն էր կատարում: «Երգերգոցը» կամ մարգարեությունները հիմնականում այլաբանություններ էին, ուստի մեկնիչը արդեն պետք է ցույց տար այդ այլաբանությունների պարունակած իմաստը և հոգևոր խորհուրդը:

Նույն ձևով, սկսած հին աշխարհից, մեծապես որպես այլաբանություն էին ընկալվում առակները, որոնք ունեն երկմաս կառուցվածք: Առաջին մասը առակի պատմությունն է, իսկ երկրորդը՝ այդ պատմությունից կատարվող բարոյական եզրահանգումը, որը կարող է նաև որպես մի այլաբանություն ներկայացնել պատմված թեման և տալ այդ այլաբանության բացատրությունը:

Ավետարանական առակներում ևս հիմնականում պահպանված է երկմաս կառուցվածքը՝ բուն պատմությունը և այդ պատմությունը հաջորդող մեկնաբանությունը՝ կատարված Հիսուս Թրիստոսի կողմից:

Ժամանակի ընթացքում մեկնությունները կարևոր գործոն են դարձել ոչ միայն ներեկեղեցական դավանաբանական խնդիրների ճշտման, սուրբգրային հասկացությունների հետազոտման և ուղղափառ դավանությունամբ Աստվածաշնչի ընկալման ճանապարհին, այլ և բազում անգամ ընդօրինակվելով՝ ուղղակիորեն նպաստել են քրիստոնեական վարդապետության հիմունքները քարոզելու կրթական առաքելությանը:

### **բ. Ավետարանական առակների քարոզչական գործառույթը**

Ի տարբերություն բանախյուսական որոշ ժանրերի, հատկապես առավել վաղ շրջանի առասպելների՝ առակների այլաբանական շերտը առավել սակավ է, և վերջիններիս գործողություններն ունեն սրընթաց զարգացում: Հին արևելյան և Աստիկ առակների ավանդներն իրենց նորովի շարունակությունը գտան քրիստոնեական վարդապետության մեջ: Քրիստոսի քարոզխոսության անքակտելի մասն էին քարոզները: Քարոզխոսական գրականության մեջ, որի բարձրակետը դարձան Գրիգոր Տաթևացու «Քարոզգրքի» երկու հատորները, ասված խոսքին հաջորդում կամ նախորդում է առակը՝ դառնալով Քրիստոսի տվյալ ուղերձի պատկերավոր այլաբանությունը: Կարելի է ասել, որ առակների ճշմարիտ ընկալումն անհավանաբար է քրիստոնեության եռթյան մեջ խորամուխ ինքնուրու համար. չէ՞ որ Ավետարանների մեկ քառորդ մասը կազմում են առակները:

Հին Կտակարանի «Առակաց գիրքը» մեզանում մեկնել են Գրիգոր Տաթևացին<sup>1</sup>, Համամ Արևելցի<sup>2</sup> և Ներսես Լամբրոնացի<sup>3</sup>,

<sup>1</sup> Գրիգոր Տաթևացի, Մեկնություններն Առակաց, ՄՄ. ձեռ. 342, թ. 109ա-71բ:

իսկ Նոր Կտակարանի առակների վերաբերյալ ամբողջական մեկ աշխատություն է մեզ հասել. 18-րդ դարի հեղինակ Պետրոս Բերդուլմանի «Աղբյուր բացեալը»<sup>4</sup>: Վերջինիս Մեկնությունը մեր մատենագրության մեջ ավետարանական առակներին նվիրված միակ աշխատությունն է, որ ամբողջապես պահպանվել է:

Խորհրդանշական է այն իրողությունը, որ հայերեն մաշտոցագիր առաջին նախադասությունը վերցված է «Առակաց» գրքից:

Գրական տեսանկյունից ավետարանական մի շարք համեմատություններ, ինչպես, օրինակ, «Նման է արքայ ութիւնն երկնից»-ը, հայ մեկնողական և աստվածաբանական գրականության մեջ ներկայացվել են որպես առակներ:

Այս ենթագլխում քննվում է նաև առակ-առասպել հարաբերակցությունը ըստ միջնադարյան ժանրերին հայ հեղինակների տված բնորոշումների և հատկապես առակի՝ որպես «առակն»՝ աչքին ուղղված ստուգաբանությանը, որի տարբեր օրինակները բերված են «Բառգիրք Հայկազան լեզուի» կոթողային աշխատանքի մեջ: Նման բնորոշում պարունակող բնագրերի մանրակրկիտ քննությունը կատարել է Հենրիկ Հովհաննիսյանը «Թատրոնը միջնադարյան Հայաստանում» գրքում, ուր վերհանված են նաև առակի թատերական տարբերը: Գիտնականի հիշյալ հարցադրումները հավելյալ հիմնավորում են ստանում մեր աշխատանքում, ուր ներկայացվում է ավետարանական առակների ծիսաարարողական գործառնյթը Մեծի Պահոց ժամակարգության շրջանակում:

Նույն ձևով հայ մատենագրության տարբեր ժանրերում այս կամ այն առակի թեմայով ստեղծագործություններին շեշտված բարոյադաստիարակչական ուղղվածությունն ունենալը բացատրվում է միջնադարյան վարդապետարանների համար որպես ձեռնարկ գրված գործերի շարքում վերլուծվելով:

#### **գ. Ավետարանյան առակի ժանրային սահմանման հարցը**

Աստվածաշնչում առկա են գրական մի շարք ժանրեր, և սրանց հստակեցումն ու սահմանումը, անշուշտ, կարևոր է նաև մեկնումի՝ էքզեգետիկայի տեսանկյունից: Աստվածաշնչյան մի քանի գրքեր, որոնցում գերակայում է բարոյախրատական բովանդակությունը, ընդունված է կոչել իմաստնության, ինչպես նաև ուսուցողական: Դրանք են՝ Հոբի գիրքը, Սաղմոսները, Առակացը, ժողովողը, Երգերգոցը, Սողոմոնի և Սիրաբի որդի Հեսուի իմաստասիրությունները: Նույնը նաև առակները, ասացվածքները կամ հավելյալ թևերը, գեղարվեստական-տիպական համեմատությունները, որոնք

<sup>2</sup> **Համալ Արևելյի**, Մեկնություն ինչև առակաց, աշխ. Մխթար քին. Սարիբեկյանի, Ե., 1994, էջ 161-252:

<sup>3</sup> **Ներսես Լամբրոնացի**, ՄՍ. ձեռ. 4211, թ. 1ա-286ա, (Հռոմկլա, 1292թ.):

<sup>4</sup> Սույն գրքի աշխարհաբար թարգմ.՝ Աղբյուր բացեալը, (Ավետարանական առակների մեկնություն), աշխ. Հայր Զաքարիա Բաղուլմանի, Ս. Էջմիածին, 2008, էջ 349:



արտահայտված են մեկ բայական կառույցով, իմաստասիրական չափազանց հակիրճ բանաձևով և մենտրով: Սռակի մանրակերտ են Քրիստոսի հետևյալ խոսքերը. «Ամենայն որ լսե զբանս իմ զայսոսիկ՝ և առնե զսոսա նմանեսցե առն իմաստնոյ, որ շինեաց զտուն իւր ի վերայ վիմի» (Մատթ. Է 24): Ընդգծված կապակցությունը այն բանաձևն է, որը, միանալով տարբեր համեմատությունների հետ, դառնում է առակի մանրակերտը: Առակը և ժողովրդական աֆորիզմները Փրկիչն օգտագործում էր փարիսեցիներին և դպիրներին հակադարձելիս:

Առակներն ունեն որոշակի յուրահատկություններ, որոնք կապված են տարածաշրջանային ու մշակութային ավանդույթների հետ: Այսպես, օրինակ, բուդդիստական, կոնֆուցիստական, հնդկական առակներում, որպես կանոն, գործում են որոշակի անուններով անձինք, ինչը կարծես անմիջականությունն ու հավաստիությունն է հաղորդում պատմությանը, այնինչ եբրայական և քրիստոնեական առակներում, որոշ բացառություններով, ամեն ինչ ընդհանրացվում է: Այստեղ հստակ է գործողություն վայրը, ժամանակը, կերպարներն անանուն են:

Նոր Կտակարանում առաջին անգամ հանդիպում ենք պատում առակների, որոնք միաժամանակ քարոզի անքակտելի մասն են: Առակ (եբր. לשם- համեմատություն)՝ ոչ ծավալուն, խրատական ասույթ կամ պատմություն: Հին Կտակարանում այս եզրույթի անվան տակ դրվում էր հետագայում հայտնի ասացվածք ժանրը, ինչպես, ասենք, Սողոմոնի Գիրքը: Ասացվածքի և պատմի միջևնկյալ տեսակ են համեմատություն-առակները՝ (տե՛ս Մատթ. ԺԱ 16, կամ՝ ԺԳ 44-50 և այլն): Քրիստոս ոչ միայն շարունակում է Հին Կտակարանյան առակային ժանրի ավանդույթը՝ (տե՛ս Բ Թագ. ԺԲ 104, Գ Թագ. Ի 35-42, Եսայի Ե 1-7), այլ և կատարելության է հասցնում այն՝ բերելով քննարկման նյութի ամբողջապես նոր որակ:

Ժամանակակից ուսումնասիրություններում առակի մեկնություններ կոչվում են տեղում է առաջարկվում՝ դրանք պատմական տեսանկյունից ճիշտը նկատելու համար<sup>5</sup>:

Նոր կտակարանական առակների որևէ դասակարգում կարող է լինել պայմանական: Դրանք բազմաշերտ են, և հստակ ենթաբաժիններով տարանջատելն անիմաստ է: Իհարկե, կան մի շարք առակներ, ուր մենք հանդիպում ենք նույն հովիվներին, մշակներին և նրանց տերերին, սակայն առակների պարունակած այլաբանությունները բազմազան են: Կարելի է տեսնել և

<sup>5</sup> Դրանցից առաջինի մասին խոսում է Յուլի հերը, որի հիմնական սկզբունքն այն է, որ առակների մեկնությունը հարկավոր է տարանջատել այլաբանությունների մեկնությունից, քանի որ երկրորդն ամբողջապես մտացածին է, հեղինակային երևակայության արդյունք, իսկ առակը պատում է՝ վերցված հանապազօրից, նպատակ ունենալով հաղորդել մեզ որևէ բարոյական կամ հոգևոր ճշմարտություն: Առավել մանրամասն տե՛ս **Crossan J.D., Ricouer P.**, Reading Jesus' Parables, Originally Published in the European Journal of Theology, [www.livingspirituality.org](http://www.livingspirituality.org)

հակառակ երևույթը, երբ բազում առականման հատվածներով Քրիստոս խոսում է նույն երևույթի մասին: Նմանօրինակ շարք է, ասենք, երկնքի արքայությունը բացահայտող առականման այլ արանությունների որոշ մասը, երբ երկնքի արքայությունը համեմատվում է Ուռլանի, Մանանեխի հատիկի, Թաքնված գանձի և այլ հասկացությունների հետ:

Նոր Կտակարանում կարելի է հանդիպել ավելի քան երեսուներեք առակների: Դրանք Ավետարանիչների կողմից գրառվում են երբեմն հաջորդաբար, որն էլ հնարավորություն է տալիս այդ առակները բաժանել ըստ Փրկչի գործունեության երեք փուլերի՝ Լեռան քարոզից անմիջապես հետո, ինչպես և երկրորդ և երրորդ Պահքի շրջանների միջև:

Առաջին դարում արևելյան ժողովուրդների, հատկապես հույների և հրեաների միջավայրում, տարածված էր առակասության ժանրը՝ «խօսելը նոցազբազում բանս աստուածայինս և հոգևորս, սակայն ի ձեռս պեսպես առակաց և օրինակաց, ըստ որում սովորութիւն էր ազգին այնորիկ, և ժամանակին, զի այնպիսի վարդապետութիւնքն ի ներքոյ ոմանց առակաց, և նմանութանց լինիցին»<sup>6</sup>: Քրիստոս շարունակում է ժողովրդին հարազատ և ընկալելի հիկնկտակարանյան ավանդույթը:

Կրոնական ծիսամատյաններում «առակն», իբրև եզր, կիրառվում է այլ արանական համեմատության իմաստով. «Ասաց և առակ ընդ նոսա, Միթէ կարիցէ կոյր կուրի առաջնորդել, ոչ ասաքէն երկոքին ի խորխորատ անկանիցին», կամ՝ «2ի ոչ ծառ բարի, որ առնէ պտուղ չար, և ոչ դարձեալ ծառ չար, որ առնէ պտուղ բարի, զի իւրաքանչիւր ծառ ի պողոյ իւրմէ ճանաչի» (Ղուկ. 2 44)<sup>7</sup>:

Մեծ Պահքի շրջանում ընթերցվող առակների դեպքում, սակայն, անհրաժեշտ է տարբերակել ինքնին ավետարանական առակները և այդ առակների թեմաներով գրված ստեղծագործությունները:

Նման տարբերակումը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Անառակ որդու» և մյուս առակները, որպես պահքի տվյալ շաբաթվա հետ կապված հոգևոր խորհրդածությունների նյութեր են դիտվել, որոնց, ըստ այդ օրվա եկեղեցական կանոնի, նվիրվել են շարականներ, գանձեր և քարոզներ:

## ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ

### ՄԵԾ ՊԱՒՔԻ ԿԻՐԱԿԻՆԵՐԻ ԱՌԱԿՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ՄԵԿՆՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեծ Պահքի յոթ շաբաթներից յուրաքանչյուրը խորհրդաբանորեն և իմաստային ներքին կապով կապված է նախորդի հետ, որի համար պահքը անվանվում է հոգևոր ճանապարհորդություն՝ կազմված մինչև Չարություն և ձգվող կայաններից կամ Շնորհք պատրիարք Գալուստյանի գեղեցիկ բնորոշմամբ՝ «Մեծի պահոց ոսկե շղթաներից»:

<sup>6</sup> **Անանուկ**, Մեկնութիւն սրբոյ Աետարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ Մատթեոսի, Վենետիկ, 1737, էջ 295:

<sup>7</sup> Ճաշոց գիրք Յայաստանեայց եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1872, էջ 111, (այսուհետ՝ Ճաշոց գիրք):

Մեծ պահքի շաբաթներից յուրաքանչյուրը ցույց է տալիս դրախտային կյանքից մեղանջ մամբ անկման և Ս. Յարու թյամբ փրկագործության արժանապարհուն ընթացքը:

Պահքի առաջին կիրակին հայ եկեղեցական ավանդույթով և ժամակարգության մեկնությանը նվիրված մատենագրական ստեղծագործությունների հետևողությամբ անվանվում է Բուն Բարեկենդան, որը խորհրդանշում է նախաստեղծների դրախտային երջանիկ կյանքը:

Պահքը քանի որ նվիրված է գործված մեղքից ապաշխարությանը, ուստի երկրորդ կիրակին հիշատակվում է նախածնողների գործած մեղքը և դրախտից վտարումը: Այս պատճառով երկրորդ կիրակին անվանվում է Արտաքսման կիրակի:

Ինչպես որ գործված մեղքին հաջորդում է զղջումը և դարձը առ Յայրը՝ Աստված, այնպես և երրորդ կիրակին նվիրված է զղջման գաղափարի մարմնավորումը եղող «Անառակ որդու» առակին:

Չղջումը և ապաշխարությունը պետք է ուղեկցվեն բարի գործերով և հանապազ աղոթքով: Այս պատճառով Պահքի չորրորդ կիրակին նվիրված է բարի գործերի կատարմանը՝ «Տնտեսի առակին», իսկ հինգերորդ կիրակին՝ այլաբանորեն հանապազ աղոթքի կարևորությունը շարունակ շեշտող «Անիրավ դատավորի» առակին:

Բարի գործերով և աղոթքով ուղեկցվող զղջումը հանգեցնում է փրկության հույսին, որն արտահայտվում է Քրիստոսի երկրորդ գալուստը խորհրդանշող Գալստյան կիրակիով: Պահքը եզրափակվում է փրկության հույսի մարմնավորումը և իրականացումը եղող Ս. Յարու թյան կիրակիով:

Ատենախոսության այս գլխում ցույց է տրվում Պահքի շաբաթների իմաստային-խորհրդարանական ընթացքի արտացոլումը միջնադարյան մեկնություններում և գրական ստեղծագործություններում, որը գեղարվեստորեն առավել ցայտուն արտահայտվել է Շարակնոցի և Գանձարանի այս կիրակիներին նվիրված կանոններում:

### **Ա Անառակ որդու առակի գրական մեկնաբանությունները զղջման և ապաշխարության համառոտում**

Քրիստոնեական վարդապետությունը թերևս ամենախոր կերպով բացահայտող առակներից մեկը Մեծի Պահոց շրջանում ընթերցվող Անառակ որդու (Ղուկ ժե 11-32) առակն է:

Սուրբ Յովհան Ոսկեբերանը ասում է, որ թե աշխարհի երեսին բոլոր գրքերը և անգամ Սուրբ Գիրքը այրվեին, ու փրկվեր միայն «Անառակ որդու» առակը, դա բավական կլիներ մարդկության համար, որպես սղուսումնաբերության փրկվի<sup>8</sup>:

Մոլորյալ որդու թեման մենք գտնում ենք և Յին Կտակարանում. «Անհնազանդ որդին կորստյան պիտի մատնվի» (Առակ. ժԳ. 1):

<sup>8</sup> **Дионисий (Каламбакас) Арх.**, Три беседы на притчи Господни, <http://www.pravoslavie.ru/orthodoxchurches/41574.htm>

Սակայն Անառակ որդու առակով քրիստոնեական վարդապետությունների մեջ այս թեման նոր նշանակություն է ստանում: Այս առակը բացառիկ է նաև նրանով, որ թերևս միակն է, որ թե՛ մեկնություններին, թե՛ հատկապես դավանաբանական մտքի մեջ փոխկապակցված է եղել նախորդող երկու առակներին՝ «Կորած դրամի» և «Կորած ոչխարների» առակների հետ: Այսինքն՝ սամիեռաստիճան համակարգ է, ուր ասելիքը զարգանում է աստիճանական բարդություններով: Այս առակները մեկնողական քարոզարքերում լրացվում են մեկը մյուսով, իսկ ծիսամատյաններում նրանք կողք կողքի են հանդես գալիս<sup>9</sup>: Մաշտոց եղիվարդեցիի «Անառակ որդու» առակի ավետարանական բնագիրը գետեղելուց հետո իր քարոզն սկսում է «Կորուսյալ ոչխարի» (Ղուկ. Ժե 4-6) առակից մեջբերմամբ<sup>10</sup>:

Առաջին երկու առակներում չի նշվում կորստյան պատճառը, դատվյալ համատեքստում էական չէ: Երկու դեպքում էլ առակի հիմքում տիրոջ՝ կնոջ կամ հովվի կողմից կորսվածի որոնում է: Այս առակների մեկնություններում ի սկզբանե գետնի խում է այլ արանությունը. «Կին նշանակե գիողի մարդոյ, Ժ. դրամ՝ նկարագրեալ ի նմա կատարյալ առաքինութիւնք. մի արանութեամբ հինգ հոգեղէն զգայութեանց»<sup>11</sup>: Սկզբում կորուստը չնչին արժեք ունեցող և անշունչ պղնձե դրամն է, հաջորդ առակում կենդանին՝ ընդամենը մի ոչխար ողջ հոտի մեջ, և միայն երրորդ՝ «Անառակի» պատմության մեջ կորստյան է մատնված մարդը<sup>12</sup>:

Մեկնություններում եղանակները նույնն են ինչպես և մյուս առակներում: Հայ կական մեկնություններում ակնհայտ է այլ արանական մոտեցման ալեքսանդրյան սկզբունքների ազդեցությունը<sup>13</sup>:

Առակում կենտրոնական դրվագ է Անառակի տարաշխարհ գնալը, որը քրիստոնեական աշխարհընկալման մեջ առանցքային տեղ է գրավում: Այսինքն՝ կյանքը միամբողջ ճանապարհ է ետ, դեպի հայրական տուն. «...գնացյալ խարհի հեռի. և անդ վատնեաց զինչ սիւր, զի կեայր անառակութեամբ» (Ղուկ. Ժե 13):

Հայրական տնից հեռանալուն և օտարություն մեջ անառակաւալուն և հաջորդում է մարմնական սովը: Անառակի քաղցելու դրվագը գեղեցիկ կերպով է լուսաբանում Կիլիկյան Հայաստանի XIII դարի մեկնիչ Սարգիս Կունդը. «Դառնագոյն և տաժանելի է հոգոյն սովն: Թեպէտև ոմանք յիմարեալ կրեն զնա

<sup>9</sup> Ճաշոց գիրք, էջ 113-4:

<sup>10</sup> **Մաշտոց եղիվարդեցի**, Մատենագիրք Հայոց, հ.տ. Թ., Անթիլիաս, 2008, էջ 645:

<sup>11</sup> **Ստեփանոս Սիւնեցի**, Մեկնութիւն չորից Աւետարանչացն, աշխ. Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանի, Եր., 1994, էջ 124, (այսուհետ՝ Ստեփանոս Սյունեցի):

<sup>12</sup> **Բարսեղ Շնորհալի**, Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին, որ ըստ Մարկոսի, հ.տ. II-րդ, Կոստանդինուպոլիս, 1826, էջ 124:

<sup>13</sup> **Իզնադրոս Սլլեռնեցի**, Մեկնութիւն Ղուկասու Աւետարանին Ղուկասու, էջ 267 (այսուհետ՝ Իզնադրոս Սլլեռնեցի):

և ո՛չ իմանալ կարեն, սակայն տագնապին անըմբռնելի սովովն խաբշեալ ք»<sup>14</sup>:

Կարծում ենք՝ Անառակի անառակում շարունակ շեշտվող հոգու սովի գաղափարն է, որ հետագայում որպես ոգու սովի ըմբռնում փոխանցվել է Նոր շրջանի հայ դասական գրականությանը:

Անառակ որդու գղջումը բացահայտվում է Քրիստոսի հաջորդ անառակ մեկ այլ համարով. ««Որդիք աշխարհիս այսորիկ իմաստնազոյնք են, քան որդիս լուսոյն յագգս իւրեանց» (Ղուկ. Ժ2 8): Այս միտքը Յովհանն Ոսկեբերանը պարզաբանում է, որ մարդիկ թեն մեղանչում են, բայց հաճախ գղջում են և դարձի են գալիս, ինչպես անառակում կրտսեր որդին<sup>15</sup>:

Յատվածում ամփոփվում է անառակի ողջ խորհրդաբանական կառուցվածքը՝ սկսած խոգերի կերակուրի հանդիսացող «եղինջից» մինչև անառակի «տարաշխարհ գնալն» ու վերադարձը: Մեկնիչները այս անառակի միջոցով բացահայտում էին, թե ինչ է անառակությունը, ով է «մուրացիկը», ովքեր են հայրական տանը աշխատող «վարձկանները», անառակի «մատանին», «կոշիկները»:

Առակի անանցքը, սակայն, անշուշտ կրտսեր որդու գղջումն է: Առակը ցույց է տալիս, որ սեփական մեղսականության գիտակցումն է բերում հոգու խաղաղմանը, իսկ Աստված կների ու ընդհանրապես կգա, ինչպես անառակում հայրն է ուրախացած ընդհանրապես գալիս իր մոլորալ որդուն. «Նոյնպես և ամենայն մեղաւորաց աննէ գթած Յայրն երկնաւոր», ինչպես գրում է Տաթևացին<sup>16</sup>:

Միջնադարյան մեկնողական գրականության մեջ կարևոր են Ավետարանի յուրաքանչյուր բառի իմաստային բոլոր նրբերանգները: Երբեմն այդ նրբերանգները անգամ կորչում են գրաբար տեքստի աշխարհաբար փոխադրության ժամանակ, ինչպես, օրինակ, գրաբարում. «Եւ յարուցեալ եկն առ հայր իւր» (Ղուկ. ԺԵ 19): Ժամանակակից հայերենում «յարուցեալ եկն»-ը «վերկացավ եկավ» է թարգմանվում, և կորչում է գրաբարյան **հարությանն** անելու իմաստը: Այս նրբերանգն է շեշտում Բերդում ժամը՝ գրելով՝ «Յարեալ իմահաբեր քնոյն և յանկմանէ ի խոր մեղաց»<sup>17</sup>:

Առակը հրաշալիորեն ներհյուսվել է Մեծի Պահոց քավության ճանապարհի ընդհանուր տրամաբանության մեջ, իսկ նրա իմաստային ենթաշերտերը խորապես քննվել են ոչ միայն ներեկեղեցական գրականության մեջ, այլև Անառակի պատումը դար-

<sup>14</sup> **Սարգիս Կուկոյ**, Մեկուսու թիւն Աւետարանին Ղուկասու, Էջմիածին, 2005, էջ 348:

<sup>15</sup> **Յովհանն Ոսկեբերան**, ճառք, նշխարքի մեկնութեանց սուրբ գրոց, (բնագրեր), աշխ. Յ. Զյոսեյանի, Ս. Էջմիածին, 2008, էջ 359:

<sup>16</sup> **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամարան հատոր, էջ 63:

<sup>17</sup> **Պետրոս սրբ. Բերթումեան-Աղամալեանց**, Աղբիւր բացեալ, Ս. Էջմիածին, 1845, էջ 111, (այսուհետ՝ Պետրոսեալ. Բերթումեան-Աղամալեանց):

ծել է համաշխարհային գրականություն և արվեստի մեջ քանիցս արծարծված թեմա:

Վերջինիս առանցքում որդիական զղջման և հայրական ներման գաղափարն է: Թե՛ զղջումը և թե՛ ներումը իրենց հուզական տարաբնույթ դրսևորումներն են գտել հայկական շարականներից մինչև Ռեմբրանտի նշանավոր կտավը:

Ատենախոսության մեջ ընդգծվում է, որ, պայմանավորված առակի դրամատիզմով և հուզականությամբ, նրան նվիրված ստեղծագործությունները ամենահուզականը ու առավել զգացմունքայինն են, ուր աստվածաբանական այլաբանությունները արտահայտվում են մարդկային հուզական ապրումներին զուգակցված՝ հոր և որդու երկխոսությամբ և մարդկային բարձր զգացումներով:

### **Բ. Բարի գործերի գաղափարը Անիրավ տնտեսի առակում**

Անիրավ տնտեսի պատմությունը անկասկած ամենաբարդ ընկալելի առակն է (Ղուկ. ԺԶ 1-13), որ հնչել է Տիրոջ շուրթերից և բազում վեճերի ու թյուրիմացությունների առարկա դարձել: Այն Նոր Կտակարանի դժվարըմբռնելի հատվածներից է, որի ընկալման համար հարկավոր է դիտել այն ողջ քրիստոնեական վարդապետության այն համատեքստում: Չէ՞ որ այն արտաքուստ տնտեսի փոքրիկ գանցանքների մասին է, ով փոխում է իր տիրոջ մուրհակները՝ հետագա սեփական շահի համար: Այսինքն՝ իր տիրոջ ունեցվածքը ոչ միայն չի հավելում, այլև վատնում է: Եվ առակի ընկալման բարդությունը հենց այն է, որ տերը, իմանալով այս ամենը, ոչ միայն չի պատժում իր տնտեսին, այլ և գովաբանում է նրան:

Ավետարանական որևէ առակ պարզաբանելու համար հարկավոր է նախ գատորոշել նրա խորհրդաբանական իմաստը և հստակեցնել, թե ինչ պիսի հարցեր են ծագում սուրբգրային վերը նշված հատվածն ընթերցելիս: Այս պարզաբանում կարևոր է հասկանալ, թե որն է «տունը», ինչ է «տնտեսությունը», ով է «մեծատունը» և ընդհանրապես՝ «մեծությունը»: Ատենախոսության մեջ մանրամասն անդրադարձ է կատարվել հայ մեկնիչների տված բացատրություններին՝ այլաբանական հատվածները դիտարկելով ոչ միայն հին հունարենի հետ համեմատությամբ, այլև համաշխարհային մեկնողական գրականության հետքերված գուգահեռով:

Ըստ էության սա առակ է երկրային ունեցվածքի համատեքստում Աստծո և մարդու փոխհարաբերության մասին:

Իգնատիոս Սևելեմնեցին «Անիրավ տնտեսի» առակի մեկնությունն սկսում է «Կորած ոչխարի», «Կորած դրամի» և «Անառակ որդու» ընդհանուր ասելիքի ենթատեքստում, և սա պատահական չէ, ինչը թեև բխում է ավետարանական շարադրանքի ընթացքից<sup>18</sup>, սակայն մեր մեկնիչները հազվադեպ են շարկապում նախորդ ե-

<sup>18</sup> Քրիստոս որոշ առակներ պատմում է փոխառորդաբար, այսպիսով սրանք յուրօրինակ խումբ են կազմում:

րեք առակները «Անիրավ տնտեսի» առակի հետ<sup>19</sup>: Այսպիսով՝ ընդգծվում է առակների ուղերձների միմյանց փոխադրորդ գարգացումը Քրիստոսի քարոզիտություն մեջ:

Ըստ միջնադարյան հայ մեկնողական ավանդույթի՝ այս առակը նախևառաջ Աստուծոց ստացված շնորհների տնօրինման մասին է, այն է՝ յուրաքանչյուր հավատացյալ, ով գեթ որևէ շնորհ է ստացել Աստուծոց, արդեն ինքն է տնօրինում այդ ձիրքից օգտվել կամ չօգտվել ու տնտեսությունը<sup>20</sup>:

Միջնադարյան դպրոցական սխոլաստմեթոդով գրված աստվածաբանական երկերում տարածված է որևէ երևույթին տասը տարբեր պատճառ-բացատրություններով անդրադառնալը, բացահայտելը. ինչպես մեկնիչներն էին գրում. «Եւ այս վասն տասն պատճառի»: Մեզանում հատկապես տեսանելի է այս երևույթը Տաթևի դպրոցի ներկայացուցիչների մոտ: «Տասը» թիվը հաճախ համարվել է «բազումի» այլասացությունը: Այստեղ հարկավոր է ուշադրություն դարձնել ևս մի հանգամանքի: Յանտեսի քանակները մեծ վարդապետները մատնացույց են անում տվյալ երկի ընդհանուր ուղղությունը, մոտեցումների տրամաբանությունը՝ ընդհանուր ուղղվածություն, իսկ նրանց աշակերտները, հետագա դարերում հավելումներ կատարելով մեկնողական հայեցակարգի մեջ, հաճախ նախնական չորս-հինգ համեմատությունները կանոնաբար հասցնում են «տասի», և միայն ադբյուրագիտական քննությամբ է հնարավոր պարզել, թե այս կամ այն գործի որ հատվածն է հեղինակային, իսկ որն է համալրված հետագայում:

Ժամանակակից արտասահմանյան միշտ քզիտականներ դեմ են արտահայտվում առակների այլաբանական մեկնությունը<sup>21</sup>: Սակայն ակնհայտ է, որ առանց այլաբանական մոտեցման անհնար է բացահայտել առակների իրական ասելիքը: «Անիրավ տնտեսի» մեկնությունն պարզապես այդ հանգամանքը ցայտունորեն երևում է, քանի որ տանուտերը նախատելով փոխարեն գովում է իր տնտեսի հնարամտությունը, իսկ առակը եզրափակվում է «Արարեք ձեզ բարեկամս ի մամոնայե անիրաւ ութեան» (Դուկ Ժ28-9) դժվարընկալելի պատգամով:

Սակայն մեզ համար անսովոր որոշ ձևակերպումների տակ թաքնված է շատ ավելի խորքային իմացություն: Թերևս սա նոր Կտակարանում այն միակ առակն է, որը նախատեսված էր այդպսի՛ն հավաքված ունկնդրի համար, այն պետք է գրանցվեր, անց-

<sup>19</sup> Սա բավական ուշագրավ է, քանի որ ավետարանական մեկնություններում պարզորոշ կերպով կարող ենք դիտարկել միմյանցից փոխառված մտքերը, որևէ դրվագի մեկնության համար Սուրբ Գրքի այլ հատվածի միևնույն տեսահամարների հիշատակումը և այլն:

<sup>20</sup> Տես **Գրիգոր Տաթևացի**, «Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմերան հատոր», Կոստանդնուպոլիս, 1740, էջ 394, (այսուհետ՝ Գրիգոր Տաթևացի, Ձմերան):

<sup>21</sup> Տե՛ս **Jeremias**, The Parables of Jesus [New York, 1963], **C. H. Dodd**, The Parables of Kingdom [New York, 1957]:

ներաստված աշխարհայլ հատվածների հետ համեմատությամբ ունենրի և մեկնությունների շրջափոխում և նոր միայն գտների րան փոխարինելի տեղը քրիստոնեական վարդապետության մեջ:

**Գ. Հանապազ աղոթքի կարևորության շեշտումը «Անիրավ դատավորի» առկում**

Մեծ Պահքի հինգերորդ Կիրակին ընթերցվում է Անիրավ դատավորի (Ղուկ. ԺԸ 1-8) առակը:

Ըստ էության սառակ է աղոթքի զորության մասին: Ավետարաններում շատ են հիշատակությունները, ուր Հիսուս աղոթում է՝ Մկրտությունից մինչև Գեթսեման, Պայծառակերպության լեռից մինչև Գողգոթայի բարձունքը: Եկեղեցական մատենագրության մեջ տարբերակվում են երկու տեսակի աղոթքի մասին, հավաքական կամ, ինչպես երբեմն ասում են, ընդհանրական և անանձնակի: Ընդհանրապես նորկտակարանյան առակների շարքում թերևս չկա որևէ մի այլ առակ, որը թեև ներկայացնում է իրական որևէ պատմություն՝ յուր հերոսներով և սյուլժետային որոշակի զարգացմամբ, սակայն հարաբանական վարագույն շրջանի մեկնություններից սկսյալ և հայ վարդապետության ողջ ավանդույթում ամբողջապես ընկալվել է այլաբանորեն: Այսինքն՝ թեև արտաքին սյուլժետային առումով սա պատմություն է ոմն դատավորի՝ անօրինաբար միայրի կնոջ խնդրանքները մշտապես անտեսելու մասին, սակայն իրականում խոսքը ամբողջովին վերաբերում է **հոգու** և **մարմնի** փոխարաբերությանը: Փաստորեն, սա ալեքսանդրյան մեկնությունների սկզբունքի միանգամայն վարօրինակ է:

Միջնադարյան մեկնիչները հերթով ներկայացնում են առակի «դատավորի», «այրու», «քաղաքի», «ոսոխի» այլաբանական նշանակությունները: Արդեն առիթուն եցել ենք նշելու, որ հայ մեկնաբանական մտքի վրա շեշտված ազդեցությունն է թողել Հովհան Ռսկեբերանը, և հայ մեկնության ավանդույթում այս առակի ողջ խորհրդաբանական կառուցվածքը ուղղակիորեն սերում է նրա «Անիրավ դատավորին» նվիրված ճառից: Այդպիսով հայ մեկնիչները, իբրև կանոն, տարաբնույթ եղանակներով մշտապես վերադառնում են նախնական այս մեկնաբանմանը, համաձայն որի՝ առակի «դատավորը» մարդու միտքն է, «քաղաքը»՝ մարդկային բնությունը, «այրին»՝ հոգին, իսկ այրու կողմից անվանվող «ոսոխը» մարդու մարմինն է:

Առենախոսության մեջ ցույց է տրվում, թե աստվածաբանական այլաբանությունը ինչ գեղարվեստական պատկերավորմամբ է արտահայտվում, որի բարձրակետն է դառնում «Անառակ դատավորի» Շարակնոցի Ներսես Շնորհալու հեղինակած կանոնը:

Շնորհալու ներանձնական հերոսը քրիստոսին է ապավինում, որ Տերը այրիին՝ իր հոգուն այնպես առաջնորդի, որ նա կարողանա ազդել իր մտքի վրա, որ միտքն էլ իր հերթին բանականության մեջ գսպի իր մարմնավոր ցանկությունները:



**ԳԼՈՒԽԵՐԻՈՐԴ**  
**ԱՎԱԳ ՇԱԲԱԹՎԱ ԸՆԹԱՏՔՈՒ Մ ԸՆԹԵՐԳՎՈՂ ԵՐԿՈՒ ԱՌԱԿՆԵՐԸ**  
**Ա. Անպտուղ թզենու առակը**

Մեծ Պահքի վերջին շաբաթը անվանվում է «Ավագ շաբաթ» կամ «Չարչարանաց շաբաթ»։ Շաբաթվայ ուրաքանչյուր օր ներկայացնում է Քրիստոսի երկրային կյանքի վերջին օրերը, որը նախապատրաստում է ընդամաք տերուհանան Յարու թյանը։ Շաբաթվայ ուրաքանչյուր օր նույնպես անվանվում է Ավագ։

Մեծի Պահոց Ավագ երկու շաբթի օրը նվիրված է աշխարհի արարչագործությանը։ Առավոտյան ժամերգության ընթերցվածներում հիշվում է «Անպտուղ թզենու» (Ղուկ. ԺԱ 13-24) առակը, ինչպես նաև Երուսաղեմի տաճարի լուծմայափոխներից մաքրելու պատմությունը (տե՛ս Մատթ. ԻԱ. 12-17, Ղուկ. ԺԹ. 45-48)։

Կան առակներ, որոնց մեկնություն մեջ պարզապես հորդում է այլաբանությունը, և կան մեկնիչներ, ովքեր, առաջինը բացահայտելով այս կամ այն առակի այլաբանական շերտերը, կարծես ակունք են դարձել հետագա բոլոր մեկնություններին համար։ Յովհան Ռսկեբերանն անտարակոյս մի շաբթ առակների պարագայում այդ այլաբանական շերտերի բնալիները շնորհողն է։ Այս առակն էլ բացառությունն է։ Ըստ Ռսկեբերանի՝ «թզենին» Ադամն է՝ իր «քաղցր ճաշակամաք մեղացն»<sup>22</sup>, այգին՝ Դրախտը, տնկագործն՝ Աստված։ Ընդհանրապես, բազում են թզենու այլաբանությունները՝ կապված Հին և Նոր ուխտերի հետ, ըստ որի՝ թզենին Հին Ուխտի հետևորդներն են, ովքեր, մնալով հին Օրենքի մեջ, չորացան և պտուղ չտվեցին։ Նման համեմատությունները շատ են<sup>23</sup>։

Սակայն այլաբանությունների բացատրությունները երբեք քարացած ու դոգմատիկ չեն։ Յայրախոսական գրականությունը մեզ միայն տալիս է առարկայի, երևույթի, իրադրություն համեմատությունների մտածողության ընդհանուր եղանակը, բնույթը։ Նույն Ռսկեբերանի ժամանակներում ընդունված էր շեշտել, որ սա մեկնաբանություններից միայն մեկն է. ««Թզենին ոմն»։ **Ինձ այ սափս թուլի**, թեզ Ադամ անուանե՛ք՝ քաղցր ճաշակամաք մեղացն։ Եւ «այգի»՝ գորախոսն, և «զտեր»՝ Աստուած»<sup>24</sup>։

Յուրաքանչյուր ավետարանական հատված ունի իր մեկնություն բնալիները։ Եվ դրանք անիմաստ է որոնել որևէ այլ տեղ, քան Սուրբ Գրքում։ Առակները և առականման հատվածները բացառությունն չեն։ Նախ՝ Եկեղեցու Յարերը, իսկ հետո և մեկնիչները, միմյանցից փոխառելով, ապագասերուհաներին են փոխանցել ճշմարիտ քարոզի ոչ միայն ընդհանուր դավանաբանական սկզբնիմաստները, այլ և Աստվածաշնչի տարբեր հատվածներից մի են բերել թեմային առնչվող սուրբգրային համարները։

<sup>22</sup> «Երկրորդ շաբաթ ճաշուսն. ի Ղուկասուս Աւետարանի մեկնութենէն՝ ասացեալ սուրբ վարդապետի», **Յովհան Ռսկեբերան**, ճառք, Նշխարք ի մեկնութեանց Սուրբ Գրոց, Էջ 345-6։

<sup>23</sup> **Յովհաննես Ծործորեցի**, մեկնութիւն Աւետարանին, որ ըստ Մատթէի, Ս. Էջ միածին, 2009, Էջ 451 (այսուհետ Յովհաննէս Ծործորեցի)։

<sup>24</sup> **Յովհաննես Ծործորեցի**՝ Էջ 333-4։

«Անպտուղ թզենու» առակով Քրիստոս ակնարկում էր փարիսեցիներին, որոնք ցուցադրական արտաքին բարեպաշտությամբ մեջ մոռացել էին պարզ ողորմածության մասին: Այսպիսով, նրանք անկարող էին տալ այն հոգևոր բարեգործության նենթի «պտուղը», որ պարտավորված էին՝ իբրև օրենսգետներ:

Վաղ շրջանի հայ մեկնիչներից VIII-րդ դարի առաջին կեսի հեղինակ **Ստեփանոս Սյունեցու** մոտ մենք արդեն կարդում ենք այս մասին գրեթե նույն մեկնաբանմամբ. «Թզենին» թլ պատյալ ժողովուրդն է, որ «եկն Քրիստոս քաղցեալ և ոչ եգիտ պտուղ, այլ միայն ցնորական կենդանութիւն, ուստի ի գալն նորագաւսացան»<sup>25</sup>:

### **Բ. Տաք կույսերի առակը**

Քրիստոս այն պատմում է «Մարդու Որդու» երկրորդ Գալստյան մասին խոսելիս (Մատթ. ԻԵ 1-13), երբ աշակերտները տանում են նրան՝ կառուցվող տաճարը տեսնելու<sup>26</sup>: Այսինքն՝ առակի անմիջական ունկնդիրները աշակերտներն են, չնայած կարող է թվալ, որ այս առակով Քրիստոս ուղերձ է հղում բազմությանը: Նավկայակոչում է Դանիելի մարգարեությանը, հայտնում այն արհավիրքների մասին, որ սպասվում է մարդկությանը Իր երկրորդ Գալստից առաջ: «Արթուն կացեք, որովհետև չգիտեք, թե որ ժամին կգա ձեր Տերը» (Մատթ. ԻԴ 42), այս խոսքերն են նախորդում «Կույսերի» առակի պատմությանը: Քրիստոս խոսում է անիրավ ծառաների հատուցման մասին<sup>27</sup>, ովքեր հարվածել են ծառաներին, տարվել հարբեցողության և կերուխուսով, և սկսվում է «Տաք կույսերի» պատմությանը:

Փրկչի երկրորդ Գալստյան ակնարկով է ձևավորվում առակի բովանդակային և խորհրդաբանական ողջ կառուցվածքը: Ավագ երեք շաբթին իր բովանդակային ակնարկով որոշակիորեն կապված է նախորդ օրվա խորհրդի հետ: Այսինքն՝ եթե «Անպտուղ թզենու» դրվագում «պտուղն» այլաբանորեն նշանակում էր մարդու բարի գործերը, ապա «Տաք կույսերի» առակով կարգադրվում է, որ այդ բարի գործերով պիտի պատրաստվենք Փրկչի երկրորդ Գալստյանը: Այս օրը՝ երեկոյան ժամերգության ժամանակ, եկեղեցու բեմ են ելնում տաք մանուկներ՝ իրենց ձեռքերում ունենալով մոմեր, որոնցից հինգը վառվում են, իսկ մյուս հինգը հանգած են: Վառվող մոմերը խորհրդանշում են իմաստուն, իսկ հանգած մոմերը՝ հիմար կույսերին: Այսպիսով՝ «Տաք կույսերի» առակի բերած խորհրդաբանության մոմերը յուրաքանչյուրի հավատիչներն են, ինչպես Գրիգոր Տաթևացին է վկայակոչում սաղմոսներից այն հատվածը, թե. «Ճրագ են բանք Քո ոտից իմոց, և լոյս տան շաղագ իմոց»<sup>28</sup>:

<sup>25</sup> **Ստեփանոս Սյունեցի**, Էջ 95:

<sup>26</sup> Տե՛ս Մատթ. ԻԴ.:

<sup>27</sup> «Անդեղիցի լալ եւ կրճտել առամանց» (Մատթ. ԻԴ. 51):

<sup>28</sup> **Գրիգոր Տաթևացի**, Ձմեռան, Էջ 61:

Անպտուղ թզենու և տասը կույսերի առակները իրենց աստվածաբանական իմաստներից բացի ներանձնական ապրումների գեղարվեստական արտահայտման միջոց են դարձել Գրիգոր Նարեկացուց մինչև Գրիգոր Տաթևացի: Բանաստեղծական տարբեր արտահայտչամիջոցներով հայ հեղինակները, Աստուծոն դիմելով, իրենց համեմատել են ավերտարանական առակի թզենու հետ, թե գործված մեղքերով անպտուղ են դարձել: Նույն ձևով գեղարվեստական պատկերավորման օրինակ են դարձել հինգ հիմար կույսերը, որոնց հետ համեմատությամբ ինքնաձայնակամբ ասվում էր, որ իրենց լապտերներում հանգել է բարի գործերի լույսը:

### **ԳԼՈՒԽՉՈՐՈՐԴ**

## **ՊԱՐՔԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ՀԻՇԱՏԱԿՎՈՂ ՄՅՈՒՄ ԱՈՒԿՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԱՐԿԵՏԱԿԱՆ ԱՈՒՆՁՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### **Ա. Քանքարների և մնասների առակները**

Այս երկու առակները (Մատթ. ԻԵ 14-30, Ղուկ ԺԹ 11-27) չափազանց նման են իրար և հաճախ են մեկնվում կապակցաբար: Այլ կերպերբեմն այս առակները կոչում են երեք ծառաների առակներ:

Երկու առակներում էլ տերը հեռանում է տարաշխարհ: «Քանքարների» պարագայում իր ունեցվածքը բաժանում է ծառաներին, իսկ «մնասների» առակում ինքն է գնում՝ իր հարստությանը (թագավորությանը) ստանալու:

Եթե մենք հասկանանք՝ ինչու են քանքարները բաժանվում, կհասկանանք նաև, թե ինչու է այն ընդգրկված Պահոց շրջանի առակների մեջ: Խոսքը Քրիստոսի երկրորդ Գալ ստյան մասին է, և մենք պետք է վերադարձնենք մեզ տրվածը<sup>29</sup>:

Այս երկու առակների նմանությունը ակներև է, սակայն կան և որոշակի տարբերություններ, որոնց մասին խոսում են դեռևս միջնադարյան հայ մեկնիչները<sup>30</sup>:

Երկու առակներն էլ խորհրդանշում են Քրիստոսի երկրորդ Գալուստը, դա է հիմնական պատճառը, որ մեր եկեղեցու հայրերը դրանք ներառել են Մեծի Պահոց շրջանում ընթերցվող ծիսամատյանում:

### **Բ. Անմիտմեծառան առակը**

Այս առակը (Ղուկ. ԺԲ. 16-21) հիշատակվում է միայն Ղուկասի Ավետարանում:

Այն ազահույնի մասին է (Ղուկ. ԺԲ. 16-21): Իբրև կանոն՝ առակների մեջ տեր-ծառաբառերի մեջ մենք այլ աբանորեն տեսնում ենք Աստուծուն՝ «և տերն ասեց...»: Այսինքն՝ գործող հերոսները պայմանական կերպարներ են, ասես արդեն գաղտնագերծված հասկանալի սիմվոլներ: Վերոնշյալ առակի բացառիկությունը նաև այն է, որ մեծահարուստի հետ խոսում է Ինքը՝ Աստված. «Ասեց նա Աստուած. Անմիտ՝ յայսմ գիշերի գոգիդ ի բեն ի բաց պահան-

<sup>29</sup> **Յովհաննես Ծործորեցի**, Էջ 555:

<sup>30</sup> **Մատթեոս Ջուղայեցի**, Ձեռ. 2519, 1391թ., Երևակ, թ. 65աբ, (այսուհետ՝ Մատթեոս Ջուղայեցի):

ջիցեն, իսկ գոր պատրաստեցերն՝ ու մ լ ի ն ի ց ի» (Ղուկ. ԺԲ 20): Ինչպես սակայն Բերդումյանն է շեշտում. «Հարստությանը ունը տրվում է ոչ միայն սփոփանքի և մխիթարության համար, այլ նաև որպեսզի [ինքն] էլ ուրիշներին մխիթարի»<sup>31</sup>:

Այս առակի մեկնության ժամանակ հաճախ հիշվում է Առակաց գրքի հետևյալ տողը. «Հավատացյալի համար ամբողջ աշխարհը լի է հարստությանամբ, բայց անհավատը մեկ լումախսկ չունի» (Առակ. ԺԵ 4):

### Գ. Հարստյաց սեղանի առակը

Քրիստոսի երկրային կյանքի և վարդապետության տարածման այլ աբանական պատկերումը անհնար է չնկատել այս առակում (Մատթ. ԻԲ 1-14): Այն հանդիպում է միայն Մատթեոսի Ավետարանում: Բերդումյանը գրում է, որ «հարստիքը» այստեղ Քրիստոսի մարդեղությանն է, որովհետև, ինչպես հարստիքի ժամանակ է մարմնավոր միավորությունն լինում, այսպես էլ մարդեղության ժամանակ Կույսի արգանդում անձառելիորեն եղավ աստվածային և մարդկային բնությաննների միավորությունը<sup>32</sup>:

Կենցաղային բնույթի և բարոյախրատական ուղղվածությունն ունեցող առակի նման մեկնաբանությունը ցույց է տալիս, թե այլաբանական բացատրությունը իմաստային ինչպիսի նոր շերտերով է պատում առակը, առավել ևս, երբ այն ընթերցվում և բացատրվում է Մեծ Պատիքի այս կանայն խորհրդի հետկապվող շաբաթներից որևէ մեկի ժամանակ:

### Դ. Չար մշակների առակը

Մեր ուսումնասիրության շրջանակներում, այսինքն՝ **Պահոց** շրջանում ընթերցվող առակների մեջ այս առակը (Մատթ. ԻԱ 33-44) միակն է, որ հանդիպում ենք ոչ թե մեկ, այլ երեք Ավետարաններում: Այս առումով նույն պատմության փոքր, բայց և գատորոշ շարադրանքը ինչ-որ տեղ կարելի է համարել իբրև պատումի առաջին մեկնությունը: Ըստ էության որոշ առակներ գալիս են հավելելու նախորդ առակի ասելիքը, կամ նույն գաղափարը Քրիստոս մեզ համար կրկնում է մեկ այլ առակով: Այսպիսի հստակ շարկապվածությունն ունեն «Երկու որդիների» և «Չար մշակների» առակները: «Չար մշակների» առակը գալիս է լրացնելու, կամ, եթե ասվել ճշգրիտ փորձենք լինել, մեկ աստիճան բարդացնելու նախորդի ասելիքը: Այսպիսի մի աստիճանական զարգացում, ինչպես վերնշեղիք, նկատելի է մինչ «Անառակ որդու» առակի պատմությունը «Կորած ոչխարի» և «Կորած դրամի» պատմությունը: «Երկու պարտապանների» (Մատթ. ԺԸ 23-35), «Վասն չար մշակացն» (Ղուկ. Ի 9-19) կամ «Վասն այգևոյն և մշակաց» (Մատթ. Ի 1-16) առակներում խոսվում է տիրոջ և ծառաների փոխարաբերության մասին, և միայն երկու առակում «Երկու որդիների» (Մատթ. ԻԱ 28-32) և «Անառակ որդու» (Ղուկ. ԺԵ 15-32) առակներում

<sup>31</sup> **Պետրոս արք. Բերթումեան-Աղամալեանց**, Աղբյուր բացյալ, Էջմիածին, 2008, էջ 233-4:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 185-6:

Ե կոնֆլիկտը կառուցված հոր և որդու միջև: Այս առումով այդ առակները բացառիկ են:

### **Ե. Փարիսեցու և մաքսավորի առակը**

Նոր Կտակարանում աղոթքի աստվածահան ձևի մասին Քրիստոս մի առակ (Ղուկ. ԺԸ 9-14) է պատմում: Ըստ էության, այս առակը նույնպես ուղղված էր նախև առաջ փարիսեցիներին: Փարիսեցիները իրենք իրենց անուկը Փարեսից էին վերցրել, որ թարգմանվում է «բաժանում»<sup>33</sup>: Այսինքն՝ արդեն նրանց գաղափարախոսության հիմքում դրված էր մեղավորներից և, ինչպես Բերդուվյանն է նշում՝ «բոլոր աղտեղի բաներից» իրենց զատելը, առանձնացնելը<sup>34</sup>:

«Ճաշոց» ծիսամատյանում «Անիրավ դատավորի և այրի կնոջ» առակից անմիջապես հետո ներկայացվում է «Փարիսեցու և մաքսավորի» առակը<sup>35</sup>, քանի որ եթե առաջինը ընդհանրապես աղոթքի կարևորության մասին է, ապա հետևյալ առակում արդեն խոսքը աղոթքի պահի, Աստծո առաջ կանգնելու կեցվածքի ու հոգեվիճակի խնդիրներին է առնչվում:

Այս առակը դժվարորսալի մեղքերից մեկի՝ հպարտության մասին է: Քրիստոսն ականական վարդապետության մեջ այն մահացույթ մեղքերից համարվում է ամենավտանգավորը:

Այս մասին խոսելիս Մատթեոս Ջուղայեցին գրում է. «Բայց տեսցուք թե ինչ է առաելու թիւն հպարտութան, քան զամենայն մեղաց: Արդ, հպարտութիւն մեկին է և ոչ ունի ճուղս և դստերս, և մի է յէ. (7) անց մահու չափ մեղաց և առաջի ամենեցուն»<sup>36</sup>: Քրիստոս առակավոր խոսքով նախատում է փարիսեցիներին կեղծիքի ու արտաքնացված ձևապաշտության համար: Այսինքն՝ ակնհայտ են առակի հասցեատերերը, և Ղուկաս Ավետարանիչն այդ մասին անգամ նշում է. «Ասաց և առ ոմանս պանծացեալս յանձինս թէ արդարք իցեն՝ և խոտիցեն զբազումս, զառակս զայս» (Ղուկ. ԺԸ 9):

Այստեղ ևս մի նրբության մասին է խոսում Պետրոս Բերդուվյանը: Փարիսեցիները աղոթքի կանգնելիս ասում է. «Աստված իմ», իսկ մաքսավորը՝ միայն «Աստված»: Փարիսեցիները հպարտության մեջ է, և իր գոհունականությանն է հայտնում Աստծուն, որ նա իրեն չի ստեղծել հափշտակողների, շնացողների, անիրավների<sup>37</sup> նման: Նա ինչ-որ առումով սեփականացրել է նաև իր Աստծուն: Իսկ մաքսավորը, գիտակցելով իր մեղքերը, հեռու է զգում իրեն Աստծուց, քանի որ մեղսականության պատճառով համարում է իրեն Տիրոջից հեռացած:

Փարիսեցու աղոթքի ժամանակ ասված խոսքերը ամբողջովին բացահայտում են վերջինիս ինքնաբավ կեցվածքը. «Աստուած իմ, գոհանամ զքէն, ոչ եմ իբրև զայս ի մարդկանէ զակշտակողս և

<sup>33</sup> Տե՛ս Պետրոս առք. Բերթումեան-Աղամալ Եանց, Էջ 139:

<sup>34</sup> Նույն տեղում, Էջ 139-40:

<sup>35</sup> Ճաշոց գիրք, Էջ 139:

<sup>36</sup> Մատթեոս Ջուղայեցի, թ. 60բ:

<sup>37</sup> Տե՛ս Ղուկ. ԺԸ 11:

զանհրաւս և զշուս» (Ղուկ. ԺԸ 11): Նա շարքով երկու անգամ ծով է պահում և իր ունեցածի տասանորդը տալիս տաճարին<sup>38</sup>: Այսինքն՝ օրենքի հետևորդի կերպար է: Փարիսեցիները թեև շնորհակալու թյուն է հայտնում Աստծուն, բայց Նրան պարտական իրեն չի համարում: Միանգամայն այլ է մաքսավորի կերպարը: Առաջին դարի Յրեաստանում այս մասնագիտության տեր մարդկանց հաճախ էին մեղադրում խարդախության և կեղծավորության մեջ: Եվ քանի որ հասարակությանը նրանց օտարում էր իրենից, մաքսավորը կանգնած է աղոթքի բոլորից հեռու, կարծես լքված (ԺԸ 13):

## 2. Աղքատ Ղազարոսի առակը

Այս առակը (Ղուկ. ԺԶ 19-31) վախճանաբանական ըմբռնումի տեսանկյունից չափազանց կարևոր է, և քարոզիչները հաճախ են անդրաջխարհի իրողությանը և ներքին բացահայտման համար դիմում այս առակին<sup>39</sup>:

Առակում քննարկվող հիմնական խնդիրը երկնային վարձատրուցումն է, և սա է պատճառը, որ այն ընդգրկվել է Մեծի Պահոց շրջանի եկեղեցական ընթերցանության մեջ: Մեծատան նկատմամբ վերաբերմունքը առակում հստակ է, ինչպես Իգնատիոսն է գրում. «...և եղկելի համարեցաւ զմեծատանսն՝ յայտելն. «Վա՛ր՝ ձեզ, մեծատանցդ, զի այսու կենաքս չափեցաւ մխթարութիւնն ձեր» (հմմտ. Ղուկ. 2. 24)<sup>40</sup>: Տերը մեծահարուստի անունն անգամ չի նշում, և դա նույնպես պատահական չէ: Ղազարոսը միակն է, որին, բացի իր կերպարային հիմնական հատկանիշից՝ աղքատ, տրվում է նաև անուն, մյուս առակներում կարևորվում են հերոսի միայն որակային կողմերը կամ հասարակության մեջ գրաված դիրքը՝ տանու տեր, ծառայակամ մշակ, փարիսեցի կամ մաքսավոր, դատավոր կամ այրի կին և այլն:

Մտաթեոս Ջուղայեցուց տեղեկանում ենք, որ ոչ միայն այս առակը Մեծի Պահոց շրջանում փոխել է իր ընթերցման օրը, այլ նաև թե ինչ պատճառով է այն տեղի ունեցել<sup>41</sup>:

Փարիսեցու և Մաքսավորի, Աղքատ Ղազարոսի և Մեծատան առակները, ինչպես նրանց վերնագրից իսկ երևում է, հնարավորություն են ընձեռել ստեղծելու կերպարային և ըստ այդմ նաև պատկերային հակադրություններ: Մի կողմում սեփական մեղավորությամբ տառապողներն են, իսկ մյուս կողմում իրենց՝ կարծեցյալ արդարությամբ հպարտացողները:

<sup>38</sup> «Այլ պահեմ երկիցս ի շարքով, և տամ տասանորդս յամենայն ստացուածոց իմոց» (Ղուկ. ԺԸ 12):

<sup>39</sup> Քարոզգիրք, Յաղագս երեք կացութեան մարդոյ ի կեանս, այսինքն՝ ի մահուան և յետմահուան, ձեռ. 2230, 48բ:

<sup>40</sup> **Իգնատիոս Սկեռնեցի**, էջ 321:

<sup>41</sup> **Մաթթեոս Ջուղայեցի**, թ. 53ա:

## Ե Չ Բ Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Բ

1. Եկեղեցու հայրերը, ապա և մեկնիչները, միմյանցից փոխառելով, փոխանցել են քարոզի ոչ միայն ընդհանուր դավանաբանական հայեցակարգը, այլ և Աստվածաշնչի տարբեր Գրքերից ի մի են բերել տվյալ թեմային առնչվող սուրբգրային համապատասխան համարները: Հատկապես առակների մեկնության դեպքում խորհրդաբանական այս կառույցները տեսանելի են և ավանդաբար կայուն: Առակների մի մասի սյուժետային ընթացքը կառուցված է այլաբանական տարբեր հասկացությունների վրա, որոնք մղում են խորհրդաբանական նորանոր շերտերի որոնմանը: Այլաբանական մտքի ներուճակունքում ընթացող գուպանակի նման կարող է բացվել հարյուրամյակների ընթացքում, և հայ միջնադարյան մեկնություններն ու սուլմնասիրելիս, մենք կարող ենք տեսնել թե՛ այդ ծավալման ընթացքը, թե՛ մշտապես որոշակիացող, փոխառչող որոշող կանոնականությունը:

2. Առակների եզրահանգումները երբեմն ամբողջապես չեն ներկայացվում, որպեսզի հետագայում բացահայտվեն այս կամ այն առակի իմաստային ենթաշերտերը: Որպես կանոն, սակայն, տարընթերցումների ենթակա են ոչ թե առակների խրատական հատվածները, այլ առավելապես բաղկացուցիչ մասերը: Այսինքն՝ ինչ խորհուրդ ունեն առակի կերպարներն ու հասկացությունները՝ մշակը, աշտարակը, մեծատունը, մատանին, հովիվը և կամ նրանց գործողությունները՝ թագավորի և մեծատան գնալը տարաշխարհ, այրի կնոջ՝ դատաւորին անձանձրույթ դիմելը, պարտատերերի ներումը, պատշաճ հագուստ չհագնելը և այլն: Դարեր շարունակ դավանաբանական և մեկնողական գրականության մեջ փորձ է արվել բացատրելու հասկացությունների այս համակարգը:

3. Ավետարանական այն առակները, որոնք ընթերցվել են Մեծ Պահքի ընթացքում, բացի բուն ավետարանական մեկնություններից, գրական ստեղծագործության նյութ են դարձել եկեղեցական տոներին հատկացված կանոնների, տվյալ դեպքում՝ Մեծ Պահքի կիրակիների և Ավագ Շաբաթվա օրերի շարքում: Այս հանգամանքով է պայմանավորված հիշյալ առակների թեմաներով շարականների, գանձերի, ճամերի և քարոզների գրվելը:

4. Եկեղեցական տոնի՝ կանոնի ստեղծագործություններին թեմա դառնալու շնորհիվ հիշյալ առակների այլաբանական խորհուրդը սկսել է ներկայացվել գրական տարբեր ժանրերով ու բանաստեղծական ձևերի մեջ: Հիշյալ առակների գրական մշակումն իր հերթին որոշակի գեղարվեստականություն է հաղորդել ավետարանական մեկնություններին այդ առակներին վերաբերող հատվածներին: Այսինքն՝ մեկնիչները ավետարանական մեկնությունների ժամանակ այդ առակների մեկնությունները գրելիս որոշակիորեն ազդվել են նրանց նվիրված գրական ստեղծագործություններից:

5. Պայմանավորված տոնախոսական բնույթով՝ Մեծ Պահքի ժամանակ ընթերցվող առակները իրենց բուն ավետարանական իմաստին զուգահեռ ձեռք են բերում լրացուցիչ իմաստ՝ կապվելով Մեծ Պահքի կիրակիների իրարահաջորդ խորհրդի հետ: Ըստ այդմ՝ դիտարկվում են մեղքի պատճառով դրախտային վայելչությունից արտաքսվելու և ապա զոջմամբ ու ապաշխարության միջոցով փրկագործությանն արժանանալու խորհրդի շրջանակում:

6. Պահքը, լինելով ապաշխարության արտահայտություն, որպես զոջման դրսևորում, առանձնակի հուզականություն է հաղորդել քառասոյա շրջանի երրորդից հինգերորդ կիրակիներին համապատասխանաբար ընթերցվող Անառակի, Տնտեսի և Դատավորի առակներին: Վերջիններս թեև մի քանի մեկնաբանություններ ունեն ավետարանական առակների շարքում, սակայն, պայմանավորված այդ կիրակիների պարունակած հոգևոր խորհրդով, առավել ընդունված է մեկնաբանական այն տեսակետը, որը համընկնում է տվյալ կիրակիի պարունակած իմաստի հետ:

7. Անառակ որդու առակի թեման, դուրս գալով Ղուկասի ավետարանի շրջանակից, վերածվել է զոջման գաղափարի հավաքական արտահայտության: «Մեղա Տեր» կամ «Մեղա Յար» սկսվածքով մեծ թվով ստեղծագործություններ են գրվել: Անգամ Նարեկացին, որ գործած մեղքի քավության անհուսության գաղափարով է տառապում, հոգեբանական միանգամայն այլ երանգավորմամբ է գրում, երբ առ Աստված դիմելիս վկայակոչում է Անառակին, ում մասին պատմությունն է ընկած նաև Ապաշխարության շարականների հիմքում:

8. Պահոց շրջանում ընթերցվող առակները պահքի նման կապված են փրկության գաղափարի հետ: Այս պատճառով նրանցում հիշվող մեղավորները, ովքեր ներման են արժանանում Տիրոջ կողմից, համալրել են հայ բանաստեղծության այն մեղավորների շարքը, որոնց վկայակոչելով՝ Աստուծոց թողություն են խնդրում շարականագիրները և բանաստեղծները՝ խոսքի և պատկերի կառուցման հետևյալ բանաձևով՝ «Տեր, ինչպես որ ներեցիր այս մեղավորին, ներիր և ինձ»:

Բանաստեղծական պատկերները կառուցվում են մեկ կամ մի քանի մեղավորների կերպարային զարգացմամբ և կամ բոլոր մեղավորների թվարկմամբ և վերջում իրենք իրենց հիշելով, շնորհիվ որի հուզական և թեմատիկ նոր արտահայտչամիջոցներով էր համարվում հայ միջնադարյան բանաստեղծությունը:



## **Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հոդվածներում՝**

1. Բեյլերյան Յ., «Անիրաւ տնտեսի» առակի մեկնությունը Մատթեոս Ջուղայեցու Ղուկասի Ավետարանի մեկնության քարոզգրքում, «Գրականագիտական հանդես», հմր. 14, Եր., 2013, էջ 281-97:
2. Բեյլերյան Յ., Աստվածաշնչյան մեկնությունների բանասիրական քննության հարցը և «Անառակ որդու» առակի քննությունը հայ գրականության մեջ, «Բանբեր Մատենադարանի», հմր. 20, Եր., 2014, էջ 265-72:
3. Բեյլերյան Յ., Աստվածաշնչում առկա գրական ժանրերը և Քրիստոսի՝ առակներով քարոզելու հարցը հայ միջնադարյան մատենագրության մեջ, «Կանթեղ», հմր. 59-60, Եր., 2014, էջ 11-19:
4. Բեյլերյան Յ., «Անիրավ տնտեսի» առակի մեկնության քարոզությունները հայ միջնադարյան մատենագրական ավանդության շարակարգում, «Էջմիածին», հմր, Ե., 2015, էջ 102-111:
5. Բեյլերյան Յ., «Քանքարների» և «Մնասների» առակների գուգահեռ քննությունը հայ միջնադարյան քարոզիտական գրականության էջերում, «Գրականագիտական հանդես», հմր. ԺԷ., 2017, էջ 300-311:
6. Բեյլերյան Յ., «Չար մշակների» առակի մեկնությունը հայ միջնադարյան քարոզիտական գրականության մեջ, «Բանբեր Մատենադարանի», հմր. 24, 2017, էջ 77-84:

## **БЕЙЛЕРЯН ОГАННЕС ГРАЧЕВИЧ**

Армянские толкования притч, читаемые на литургии во время Великого поста Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.01 “Армянская классическая литература”

Защита диссертации состоится 8 декабря 2017 года в 12.30 на заседании Специализированного совета Литературоведение 003 Института литературы имени М.

Абеяна НАН РА по адресу: ул. Григора Лусаворича 15, 0002, г. Ереван, Республика Армения

### **РЕЗЮМЕ**

Диссертация посвящена изучению новозаветных притч, которые читаются в Армянских церквях во время Великого Поста.

Притчи Христа с точки зрения литературоведения мало изучены и поэтому представляют собой большой интерес для раскрытия особенностей евангельских притч. Поэтому, до рассмотрения особенностей толкований новозаветных притч, мы кратко перечислили литературные жанры, существующие в Библии, и представили Антиохийский и Александрийский методы толкования.

Диссертация состоит из Введения, четырех глав, Заключения, списка используемых источников и Приложения. В введении аргументированы научная новизна данной работы, а также цели и задачи, поставленные перед автором, проанализированы использованные источники и научная литература по данной теме.

**Глава первая - “Влияние патристики на толкования притч Нового Завета в Армянской литературе”.** Теоретическое исследование притч Нового Завета невозможно, если мы не рассматриваем их на фоне раннесредневековой патристики. По этой причине в первой главе диссертации мы кратко представили историю освоения христианской доктринальной мысли в средневековой Армении. В главе также рассматривается предназначение новозаветной притчи в христианской средневековой проповеди, в частности ее применения в армянских толкованиях.

С точки зрения литературоведения чрезвычайно важно определить жанры, преобладающие в Библии. Эти уточнения могут способствовать экзегетическим, а также герменевтическим исследованиям. Дело в том, что с точки зрения литературного жанра между притчами Ветхого и Нового Заветов мало общего. Жанр притч в первом веке был достаточно распространен в Греции и в Израиле, но Христос их возвысил совсем на другой уровень. Новозаветные притчи имеют беспрецедентную богатую символическую структуру, которую невозможно полностью раскрыть без глубокого изучения библейских толкований. Отцы Церкви и последующие толкователи также много внимания уделяют вопросу о том, зачем Христос проповедовал притчами. С учетом вышесказанного заключительный

подраздел первой главы посвящен жанровому вопросу новозаветных притч, а также методам классификации этих притч с точки зрения современного литературоведения.

**Вторая глава – “Толкование притч, которые читают в Воскресные дни во время Великого Поста”.** Глава посвящена трем ключевым притчам, которые на протяжении Великого Поста читаются во время литургии в Армянских церквях. Это притчи “О блудном сыне”, “О неверном домоправителе” и “О несправедливом суде”. Притча о “Блудном сыне” безусловно, самая известная притча Нового Завета. Она очень важна с точки зрения христианского богословского учения. Возможно по этой причине притча “О блудном сыне” одна из самых разъясняемых мест Нового Завета. Армянская богословская школа толкования в этом смысле не исключение.

Вторая притча этой главы - притча “О неверном домоправителе” - до недавнего времени была самая трудная для понимания обычного верующего. Святые Отцы и толкователи многие века пытались раскрыть все тайны этой притчи. В данной диссертации мы тоже постарались выявить все аспекты этих толкований.

Средневековые армянские толкователи пытались разъяснить, о чем говорил и на что намекал Христос, когда рассказывал ту или иную притчу. Потопы и все толкования притчи “О несправедливом суде” прекрасно показывают, что в этой притче речь идет не о каком-то конфликте, а на самом деле Христос учит нас как нужно правильно молиться.

**В третьей главе диссертации – “Притчи, которые читают на литургии во время Великой Субботы”** - мы говорим о притчах, которые во время армянской литургии читают в Великую Субботу. Это притчи “О бесплодной смоковнице в винограднике” и “О десяти девах”. В литургии каждый день данной недели посвящен последним дням Иисуса Христа на земле. Это своеобразная подготовка к Воскресению Христа. В следующей притче этой главы, в притче “О десяти девах”, иносказательно говорится о втором пришествии Христа. Библейские толкования этих притч тщательно разъясняют всю их символику.

**В четвертой главе, названной “Литературные особенности и толкования остальных притч Великого Поста”**, мы изучаем те остальные притчи, которые так или иначе читаются во время Великого Поста. Это притчи “О талантах” и “О десяти минах”, “О неразумном богаче” и “О злых виноградарях”, “О фарисее и мытаре”, “О богаче и Лазаре”.

Диссертация заканчивается Заключением, которое кратко резюмирует предыдущие главы. Богослужбная книга *Чашоц* (Лекционарий) в службное чтение Великого Поста включает одиннадцать Евангельских притч. Содержание этих притч сводится к тому, как можно распределять имущество и духовной милостью, которые даны человеку на время. Это притчи “О десяти минах”, “О талантах”, “О неразумном богаче», «О злых виноградарях”, “О блудном сыне”, “О неверном домоправителе”, и даже притчи “О богаче и Лазаре” и “О десяти девах”, в

которых кроме эсхатологического подтекста мы видим также тематическое сходство.

Армянская экзегетическая школа является одним из самых древних школ христианского мира. Она прямая наследница Святоотеческой богословской мысли. До нас дошло ряд проповедей, включающих разнообразные в жанровом смысле библейские толкования.

Сюжеты притч “О талантах” и “О десяти минах” вторят друг другу. То же самое можно сказать и о ряде других притч, например, “О заблудшей овце”, “О потерянной драхме”, и “О блудном сыне”, когда Христос, как бы закрепляя сказанное, рассказывает еще одну историю.

В притчах “О зарытом таланте” и “О минах” заключен иносказательный намек на второе пришествие Христа, что и побудило отцов и учителей Армянской Церкви включить их в список одиннадцати притч, которые внесены в богослужебные чтения Великого Поста.

В толкованиях Евангельских притч, прежде всего, анализируются стихи, несущие основную смысловую нагрузку, на основе которого строится рассуждение и последовательные выводы. Изложение и иносказательная форма поучения притч раскрываются не в мистических образах, а на основе примеров из повседневной жизни. Взаимосвязь проблем духа, морали и жизненных принципов рассматривается в русле верных ориентиров бытия. И, следовательно, предыдущая поучительная часть притчи - образная история - ведет к основной идее наставления. В тезисе даются фрагменты из сочинений средневековых Армянских переводчиков, которые старались выявить символический аспект этих притч.

В диссертации каждой притчи отведено отдельный подраздел. Однако во время Пасхальной литургии читаются еще несколько маленьких притч, которым мы не выделили особое место, учитывая то обстоятельство, что как в Новом Завете, так и в разных толкованиях они так связаны между собой, что мы, так или иначе, касаемся этих притч. Это притчи “О заблудившейся овце” и “О потерянной драхме”, которые мы рассматриваем в параллели с притчей “О блудном сыне”, а также притча “О двух Сыновьях”, который во многих толкованиях связана с притчей “О злых виноградарях”.

Некоторые евангельские притчи излагаются по-разному: евангелисты акцентируют те или иные эпизоды, кажущиеся им наиболее важными. Первичной целью толкователей было не только проведение параллелей между этими отрывками, но и выявление общего и главного послания Евангелия, которое возможно понять, только если удастся выявить все семантические и контекстуальные слои конкретного стиха или эпизода.

Отцы Церкви, а позже и толкователи, не только передавали основы истинной доктринальной проповеди, но также старались извлечь из Библии все соответствующие стихи, касающиеся данного эпизода. В случае интерпретации новозаветной притчи эти символические структуры ярко выражены и традиционно стабильны.

## BEYLERYAN HOVHANNES

“Armenian interpretation of the parables read in the liturgy during Great Lent”

Dissertation for a candidate’s degree of philological science

Specialty 10.01.01.- “Armenian classical Literature”

The defence of the dissertation will take place on December 08. 2017, at 12.30 at the Specialized Council of Literary Criticism 003 at the Institute of Literature after M.

Abeghyan, NAS, RA

Address: Yerevan, 15, Grigor Lusavorich Street

### SUMMARY

The thesis is devoted to the study of New Testament parables that are read in the Armenian churches during the Great Lent. From the standpoint of literary criticism, Christ’s parables are poorly studied. Consequently, there is a great interest towards the deployment of the features of evangelical parables. Therefore, before considering the particularities of the interpretations of the Evangelical parables, we briefly listed some literary genres of the Gospels as well as introduced the Antiochian and the Alexandrian methods of interpretation.

The thesis is composed of Introduction, two Chapters, Conclusions, Bibliography and Appendix. In the Introduction the scientific novelty of this work as well as the goals and tasks set by the author are argued, the used sources and the scientific literature on this topic is analyzed.

**The first chapter** is entitled “**The Influence of the parables of the New Testament on the Patristic interpretations within Armenian literature**”. The theoretical study of the parables of the New Testament is impossible, if we don’t consider them on the background of the early medieval Patristics. For this reason, in the first Chapter of the thesis we briefly covered the history of the doctrinal development of Christian thought in the medieval Armenia.

The Chapter also discusses the place of the New Testament parables in medieval Christian preaching, and particularly in the Armenian interpretations. From the standpoint of literary criticism, it is very important to define which literary genres prevail in the Bible. This might promote the exegetical and hermeneutical research.

From the standpoint of literary genre, there is a huge distinction between the parables of Old and New Testaments. The genre of the parable in the first centuries was widely known and accepted in Greece and in Israel, but Christ raised the parables to another level. The parables in the Gospels have unprecedentedly rich symbolic structure, which impossible to reveal entirely without an in-depth study of Biblical Commentaries. Fathers of the Church, and later interpreters paid heed to the purpose of Christ, teaching per parables. Given mentioned circumstances, the conclusive sub-title of the first chapter is devoted to issue of genres in the parables of the Gospels, also to the possibility of classification of evangelical parables in terms of methods in modern literary criticism.

**The second chapter** entitled **“The Interpretation of the parables read on Sundays during the Great Lent”** is dedicated to three key parables read in the course of the Great Lent Sunday Liturgies in the Armenian Church. Those are the parables of “The Prodigal Son”, “The Unjust Steward” and “The Unjust Judge”.

The parable of “The Prodigal Son” undoubtedly is the most popular parable of the New Testament. It is an important one from in terms of Christian theological doctrine. Probably for this reason, the parable of “The Prodigal Son” is one of the most explained loci of the New Testament. In this sense, Armenian theological school of interpretation is not an exception.

The second parable of this chapter - “The Unjust Steward” - is the most difficult one for the comprehension of a common believer in Middle Ages. Church Fathers and later interpreters for many centuries were trying to disclose the hidden meaning of this parable. Following their efforts in our current thesis, we tried to touch all aspects of the interpretation of given parables.

Medieval Armenian interpreters were trying to explain the passages referring to Christ within a particular parable. The interpretation of the parable of “The Unjust Judge” perfectly shows that this parable is not about a conflict, but rather the way of praying taught by Christ.

In the third chapter bearing the caption “Parables read during the Liturgy of the Great Saturday”, the parables read during the Liturgy of Great Saturday in Armenian Church are presented. Those are the parables of “The Budding Fig Tree” and “The Ten Virgins”. The Liturgical week devoted to the last days of Jesus Christ on Earth imitating the Resurrection of Christ. The next parable in this chapter, “The Ten Virgins”, metaphorically refers to the second coming of Christ. Biblical interpretation of these parables carefully reveals and explains all the symbolical layers.

In the **fourth chapter** entitled **“Literary Features and Interpretation of Other Parables in the course of the Great Lent”**, we study those parables, which are being mentioned during the Chain of the Great Lent Sundays. Those are the parables about “The Talents or Minas”, “The Rich Fool”, “Parable of the Wedding Feast”, “The Wicked Husbandmen”, “Pharisees and the Publican” and “Rich man and Lazarus”. Dissertation ends by Conclusion, which briefly summarizes previous chapters.

The prayer book *Chashots* (Lectionary) includes eleven Evangelical parables read during the Great Lent. These parables deal with the idea of the possibility of the distribution of the property and spiritual gratitude, which are given to people temporarily. These motives are seen particularly in the parables about “Ten Talents”, “The Parable of the Gold Coins”, “The Rich Fool”, and “The Tenant Farmers”, “The Prodigal Son”, “The Shrewd Manager” and even in the parables about “The Rich Man, and Lazarus” and “The Ten Virgins”, where besides eschatological implication we see also similarity of the subjects.

Armenian exegetical school is one of the oldest in Christian world and bears the impact of the Patristical theology. Armenian ecclesiastical literature is very rich with the Sermons containing various interpretations of biblical parables. The excerpts from the

works of Medieval Armenian interpreters depicts the way they tried to reveal the symbolic side of biblical parables. Thus, the plots of the parables about “The Ten Talents” and “The Ten Mines” echo each other. The same thing is to be said about other parables, such as the parables on “The Lost Sheep”, “The Lost Drachma” and “The Prodigal Son”, when Christ as if sealing the already narrated stories, tells one more.

There is an allegorical allusion to the Second Coming of Christ in the parables about “The Buried Talent” and “Mines” that prompted the Fathers of the Armenian Church to include them in the list of eleven parables as the Lectionary readings during the Great Lent.

In the interpretations of the Gospel parables first of all the poems containing the main semantical line are being analysed. The conclusions of the thesis are constructed on this semantical analysis. The narrative and allegorical form the teachings of the parables doesn't appear in the mystical images, but rather's based on examples from everyday life. Thus, the relationship of the problems, morals, principles of life should be considered in line with the true landmarks of life. Therefore, the instructive parts of the parables should lead to the main idea of the parable. In the thesis, the fragments from the writings of medieval Armenian interpreters are introduced, where they tried to elucidate the symbolic aspect of the parables.

In the dissertation, a separate sub-division is dedicated to each of the parables. However, there are some small parables read during the Great Lent Liturgy, which are not allocated in separate chapters given the fact that in the Gospels and in various commentaries they are so inter-connected that we somehow tackle them while speaking on the selected parables of our interest. We consider the parables of “The Lost Sheep” and “Lost Drachma” in parallel with the ones on “The Prodigal Son” and “The Parable of the Two Sons” which in many interpretations are connected to the parable of “The Wicked Husbandmen”. Some of the parables are introduced differently by the evangelists: they accentuated those episodes which seemed more significant to be singled out. The interpreter's primary purpose was not solely the execution of the parallels among the similar fragments, but also the deployment of common major message of the Gospel, which is possible to understand only through revealing of all the semantical and contextual layers of a particular passage or an episode.

Church Fathers, and later on also commentators, enriched the legacy of previous authors not only by passing on the fundamentals of a true doctrinal preaching, but also by collecting from the Scriptures all the verses relevant to the given episode. Particularly, in case of the interpretation of the New Testament parables, these symbolic structures are vividly expressed and traditionally immutable.

